Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի շրջանավարտներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով ողջունում ենք ձեզ և շնորհավորում Շրջանավարտ դառնալու առիթով: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ, որ այսօր, ավարտելով ուսումնառությունը, թևակոխում եք ձեր կյանքի մի նոր շրջան:

Մեր հայրերի սուրբ հավատքով ոտք դրեք ձեր կյանքի նոր ճանապարհին, և այն կլուսավորի ձեր ուղին, ու ձեր քայլերը կլինեն հաստատուն ու անխոտոր: Այն ամենը, որ ուսանել եք դպրոցում, այն գիտելիքներն ու արժեքները, որ ամբարել եք ձեր նվիրյալ ուսուցիչների ջանքերով, դարձրեք գործեր: Գործեր, որ կրեն ավյունով լեցուն, ազնիվ ու շիտակ ձեր հոգու, ձեր հավատարմության, ձեր սիրո կնիքը՝ բարի պտուղներ բերելով մեր վերանկախացյալ Հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին: Աղոթքն ու առ Աստված ապավինությունը ուղեկից դարձրեք ձեզ, և թող Տիրոջ օրհնությունը միշտ ձեզ հետ լինի և ի բարին կատարի աստվածահաճո ձեր բոլոր մտածումներն ու իղձերը:

Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւն Յարուցեալ Տեառն մերոյ եղիցին ընդ ձեզ ամենեսեան. ամէն:

Ս. Էջմիածին,
23 մայիսի 2003 թ.